

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Սերիա		[3] Համար	
8	Մայիս	2019 թ.				Բ		2684449830	
[4] Մատուցման ամսաթիվը						Ճշգրտվող հաշիվ վավերագրի			
8	Մայիս	2019 թ.				Սերիա		Համար	
						Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ			[6] Համար			
			8 Մայիս, 2019 թ.			Բ2684449830			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)									
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ									
[7.1] ՀԴՄ կտրոնի համար									

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը		«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)										
[11] Բանկային տվյալները		ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ					N 2474602078940000					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ										
[13] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[16] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ										
[17] Բանկային տվյալները		ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն					N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5										
[19] Լրացուցիչ տվյալներ												
[20] Ում միջոցով		Անուն, ազգանուն		Համար								
		Լիազորագիր		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Շրջանակում ծավալը կամ ժամանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14134216	ժամ	14	5000		70000
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 26106716	ժամ	24	5000		120000
3	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն քր. գործ թիվ 26106716	նիշ	26141	1.39		36335.99
4	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ֆրանսերեն քր. գործ թիվ 46102814	նիշ	122428	2.5		306070
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 90366815	րոպե	200	83.33		16666
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 15101816	ժամ	32	5000		160000
Ընդամենը						709071.99

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

08/05/2019 11:48:31



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

19 հունիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության լեյտենանտ Լ. Յուլյանս, վերանայելով վարույթունս գտնվող թիվ 14134216 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի հունիսի 09-ին՝ ժամը 12:00-ից մինչև նույն օրը՝ ժամը 22:00-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը՝ ուրիշի գույքի խոշոր չափերի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ, տեխնիկական միջոցների գործադրմամբ՝ բացելով Երևան քաղաքի Ն. Տիգրանյան 7 շենքի 21 բնակարանի մուտքի դուռը, ապօրինի մուտք է գործել բնակարան և այնտեղից հափշտակել խոշոր չափերի՝ ընդհանուր շուրջ 1.600.000 ՀՀ դրամ գումարի ձմեռային մուշտակ, Այփադ, ոսկյա ականջոդեր, շղթա իր կուլոնով և մատանի:

Փաստի առթիվ 2016 թվականի հունիսի 09-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 14134216 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Օլգա Սերգեյի Վինիչենկոն ազգությամբ ռուս է, գրում և կարդում է ռուսերեն լեզվով, իսկ հայերեն լեզվին չի տիրապետում:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ Վարդուհի Ավետիսի Շահինյանն ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդ. հոդ. պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլուու» ՍՊ ընկերության տնօրեն, ռուսերենի թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին ծնվ. 28.03.1971թ, բարձրագույն կրթությամբ, հայ, ՀՀ քաղաքացի, բն. ք.Երևան Բաղրամյան 62 շ. 48 բն.

2.Թարգմանիչ Վարդուհի Շահինյանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ավագ քննիչ՝  Լ. Յուլյան

Որոշման հետ ծանոթացա  Վ. Շահինյան

«19» 07 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ. Յուլյանիս վարույթում քննված թիվ 14134216 քրեական գործով վերջինիս կողմից 19.07.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ է ներգրավվել «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի տնօրեն Վարդուհի Շահինյանը, իսկ հետագայում գործի վարույթը փոխանցվել է ինձ՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս. Պողոսյանիս: Թարգմանիչ Վարդուհի Շահինյանը սույն քրեական գործով կատարել է բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն 14 ժամ տևողությամբ:

Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝



Ս. Պողոսյան

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22-ը հուլիսի 2016թ.

ք.Վեդի

Արարատի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Է.Խաչիկյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 26106716 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

2016թ. հուլիսի 15-ին ժամը 03 :00-ի սահմաններում Արմեն Մարտիկի Մկրտչյանը ոմն Արթուրի հետ նախնական համաձայնությամբ Արարատի մարզի Ուրցաձոր գյուղում գտնվող, Գարեգին Ալեքսանյանին պատկանող մթերային խանութից գողություն կատարելու նպատակով փորձել են բացել պատուհանի երկաթե ճաղավանդակը և ապօրինի մուտք գործել ներս, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում գողությունն՝ ավարտին չեն հասցրել, այն է՝ նույն պահին խանութին է մոտեցել Գ.Ալեքսանյանը և բռնել Ա.Մկրտչյանին, իսկ ոմն Արթուրը դիմել է փախուստի:

Դեպքի առթիվ Արարատի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 26106716 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:


Նկատի ունենալով, որ Արմեն Մկրտչյանը չի տիրապետում դատավարության գրավոր լեզվին, սակայն ազատորեն տիրապետում է հայերեն բանավոր, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, քրեական գործի նախաքննությանը որպես թարգմանիչ մասնակցելու համար հրավիրվել է «Ֆինլոու» ՍՊԸ-ի աշխատակից Անի Սերյոժայի Հովհաննիսյանին:

Դեկավարվելով ՀՀ քր.դատ.օր.83-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Անի Սերյոժայի Հովհաննիսյանին ձանաչել թարգմանիչ և թարգմանություն իրականացնելու համար թույլատրել մասնակցել քրեական գործով վարույթին:
2. Ա.Հովհաննիսյանին պարզաբանել ՀՀ քր.դատ.օր. 83 հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր.օր.338 հոդվածով քրեական պատասխանատվության մասին:
3. Որոշման մասին հայտնել Ա.Մկրտչյանին:

ՀԿԳ ԲՆՆԻՉ՝



Է.ԽԱՉԻԿՅԱՆ

Ինձ պարզաբանվել են ՀՀ քր.դատ.օր. 83 հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել են ՀՀ քր.օր.338 հոդվածով քրեական պատասխանատվության մասին:



«22» հուլիսի 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
/թիվ 26106716 քրեական գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Արարատի քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Է. Խաչիկյանս, վարույթումս քննվող թիվ 26106716 քրեական գործով 22.07.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի թարգմանիչ Անի Հովհաննիսյանին, ով սույն քրեական գործի շրջանակներում կատարել է թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը՝ 24 ժամ տևողությամբ, ինչպես նաև գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն՝ 26141 նիշ:

Արարատի քննչական
բաժնի ՀԿԳ քննիչ՝



Է. Խաչիկյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման ճանաչելու մասին

26.07.2016թ.

ք.Եղվարդ

«ՎՀԳ ավագ քննիչ, արդարադատության մայրը՝ Ս.Քոլայանս, քննարկելով թիվ 46102814 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2014թ. հունվարի 24-ին, երեկոյան, Կոտայքի մարզի Պոռչյան գյուղում գործող, «Լունա» անվանումը կրող հյուրանոցային համալիրի սենյակներից մեկում Գևորգ Սասունի Պողոսյանը, գտնվելով ոգելից խմիչք օգտագործած վիճակում, իր սեռական կիրքը բավարարելու նպատակով, բռնություն է գործադրել Խաչիկ Գեղամի Սարգսյանի նկատմամբ և վերջինիս կամքին հակառակ, խաթարված ձևով՝ հետանցքից, սեռական հարաբերություն է ունեցել նրա հետ, որից հետո ավագակային հարձակում կատարելու դիտավորությամբ, հարձակում է գործել Խ.Սարգսյանի վրա և վերջինիս առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով՝ հափշտակել է նրան պատկանող ոսկյա մատանին, «Դոռադո» տեսակի բջջային հեռախոսը, 2.000 ՀՀ դրամ կանխիկ գումարը և ՀՀ քաղաքացու անձնագիրն ու զինվորական գրքույկը՝ վերջինիս պատճառելով ֆիզիկական և գույքային վնաս:

Դեպքի առթիվ 25.02.2014թ. ոստիկանության Նաիրիի քննչական բաժանմունքում ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և 324-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 46102814 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել թարգմանել փաստաթղթեր ֆրանսերեն լեզվով, ուստի անհրաժեշտ է թարգմանություններ կատարելու համար ներգրավել թարգման: Որպես թարգման ճանաչել «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի կողմից լիազորված ֆրանսերեն լեզվի թարգմանիչ Մանուշակ Լյովայի Հովհաննիսյանին:

Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 46102814 քրեական գործով «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից, թարգմանիչ Մանուշակ Լյովայի Հովհաննիսյանին ճանաչել թարգման:
2. Մանուշակ Լյովայի Հովհաննիսյանին զգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար:

ՎՀԳ ավագ քննիչ՝

Ս.Քոլայանս

Թարգմանիչ՝ *Ս. Քոլայանս* Ս. Խովհաննիսյան

ՏԵՂԵԿԱՆՔ
/թիվ 46102814 գործով/

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության ՀԿԳ
ավագ քննիչ Ս. Քոլայանս, վարույթումս քննվող թիվ 46102814 քրեական գործով
26.07.2016 թվականին որպես թարգմանիչ ներգրավել եմ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի
աշխատակից Մանուշակ Լյովայի Հովհաննիսյանին, ով սույն քրեական գործի
շրջանակներում կատարել է գրավոր թարգմանություն հայերենից ֆրանսերեն՝
122428 նիշ:

Կոտայքի մարզային քննչական
վարչության ՀԿԳ ավագ քննիչ՝



Ս. Քոլայան

29.07.2016

ՈՐՈՇՈՒՄ

Քրեական գործով վարույթին թարգմանիչ ներգրավելու մասին

28 հուլիսի 2016թ.

ք.Գյումրի

«Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ Կ.Ռ.Կարապետյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 90366815 քր. գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

«Քաղաքացի, Արագածոտնի մարզի Ջրամբար գյուղի բնակիչ, 27.04.1993թ. ծնված Բենիամին Էդուարդի Թևոսյանը 04.05.2012թ. «ՊՆ Ապարանի զինկոմիսարիատում անցել է կցագրում, առողջական խնդիրների կապակցությամբ օգտվել է տարկետման իրավունքից մինչև 2015թ. ամառային զորակոչը, սակայն ծառայությունից ազատվելու « օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում Բ.Է.Թևոսյանը խոսափել է ժամկետային զինվորական ծառայության 2015թ. ամառային զորակոչից:

Դեպքի առթիվ 21.08.2015թ. «Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է թիվ 90366815 քրեական գործը՝ «Քր. օր-ի 327-րդ հոդ. 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով:

15.10.2015թ. որոշում է կայացվել Բենիամին Էդուարդի Թևոսյանին «Քր. օր-ի 327-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրը նրա նկատմամբ հայտարարվել է հետախուզում և որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

21.10.2015թ. քրեական գործով վարույթը կասեցվել է՝ «Քր. դատ. օր-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

28.07.2016թ. «Նոստիկանության Ապարանի բաժնից ստացվել է թիվ 39/7-1582 գրությունը, համաձայն որի մեղադրյալ Բենիամին Էդուարդի Թևոսյանը 28.07.2016թ., ժամը 08:10-ին նոստիկանության աշխատակիցների կողմից Ջվարթնոց օդանավակայանում հայտնաբերվել և բերման է ենթարկվել «Նոստիկանության Ապարանի բաժնի:

28.07.2016թ. Բենիամին Էդուարդի Թևոսյանը ներկայացվել է «Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի:

Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Բենիամին Էդուարդի Թևոսյանը չի տիրապետում «Քրեական դատավարության գրավոր լեզվին և տիրապետում է, բանավոր հայերենին, գրավոր և բանավոր ռուսերենին, ուստի նրա մասնակցությամբ քննչական և այլ դատավարական գործողություններ կատարելու ընթացքում, վերջինիս հետ հաղորդակցվելու նպատակով, քրեական գործով վարույթին անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ՝ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգմանություններ կատարելու նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Քր. դատ. օր-ի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթումս քննվող թիվ 90366815 քրեական գործով ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն թարգմանություններ կատարելու համար որպես թարգմանիչ

հրավիրել <<Ֆինլոու ՍՊԸ>> թարգմանիչ Երանուհի Ամատունու Բահարյանին, ով ազատորեն տիրապետում է նշված լեզուներին:

2. Որոշման մասին հայտնել Ե.Բահարյանին և նրան բացատրել << քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

Բաժնի պետի տեղակալ,
արդարադատության մայրո՛ր՝



Կ.Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է 2016թ հուլիսի 28-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար << քր.օր-ի 338 հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են << քր.դատ.օր-ի 83 հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



Ե.Բահարյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

Բաժնի պետի տեղակալ,
արդարադատության մայրո՛ր՝



Կ.Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ամփոփիչ տեղեկանք

16.08.2016թ.

ք. Գյումրի

«Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 90366815 քրեական գործով ուսերենից հայերեն և հայերենից ուսերեն թարգմանություններ կատարելու համար որպես թարգմանիչ է հրավիրվել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Երանուհի Ամատունու Բահարյանը, ով 28.07.2016թ. մասնակցել է քննչական գործողությունների, կատարել է թարգմանություններ, որոնց տևողությունը կազմել է 3 ժամ 20 րոպե:

«Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության մայրո՝



Կ.Ռ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

27 հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության կապիտան Ջ.Խ.Դադայանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 15101816 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Ռադիկ Երվանդի Սկրտչյանը 2016 թվականի մարտի 15-ին դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետին՝ խնդրելով անվավեր ճանաչել ավտոմեքենան ԱՊՊԱ պայմանագրի բացակայությամբ վարելու մասին իրեն վարչական տույժի ենթարկելու վերաբերյալ 14.03.2016թ.-ի որոշումը՝ պատճառաբանելով, որ նույն օրը, մախքան որոշում կայացնելն ինքը կնքել է ԱՊՊԱ պայմանագիր «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ի գործակալի հետ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում «Նաիրի Ինչուրանս» ԱՍՊԸ-ի գործակալ Հայկ Հրաչիկի Սելբոնյանը բացատրությամբ հայտնել է, որ Ռադիկ Սկրտչյանի ավտոմեքենայի ԱՊՊԱ պայմանագրի ձևակերպումները կատարվել են իր կողմից՝ 2016թ.ի մարտի 14-ի ժամը 09:30-ի սահմաններում և այդ ժամանակահատվածի նշումով պայմանագրի օրինակը փոխանցել է Ռ. Սկրտչյանին, սակայն ժամեր անց տեղեկանալով, որ Ռ.Սկրտչյանը վարչական տույժի է ենթարկվել ԱՊՊԱ պայմանագրի բացակայությամբ ավտոմեքենան վարելու համար, պարզել է, որ պայմանագրի կնքման համակարգչային ծրագրային ապահովումը իր անփութության հետևանքով պայմանագիրը չի հաստատել. ուստի հենց այդ ժամանակ՝ ժամը 13:48-ին հաստատել է պայմանագրի կնքումը և Ռ. Սկրտչյանին հանձնել պայմանագրի ևս մեկ օրինակ՝ 14.03.2016թ.-ի ժամը 13:48-ի նշումով:

Փաստի առթիվ, 05.05.2016թ.-ին, ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 15101816 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Մակիչ Գուրգենի Խաչատուրյանը չի տիրապետում հայերեն և գրավորլեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանչի՝ Մակիչ Գուրգենի Խաչատուրյանի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:


Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 15101816 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլու» ՍՊ ընկերության տնօրեն Վարդուհի Ավետիսի Շահինյանին /ծնված՝ 28.03.1971թ., հաշվառված և բնակվող ք.Երևան, Բաղրամյան փողոց, 62/48 հասցեում/ ով տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին:
2. Վարդուհի Ավետիսի Շահինյանին պարգևատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝



Ջ.Խ. Դադայան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:



Վ.Ա. Ծախինյանին

« 27 » հուլիսի 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 15101816 քրեական գործով

Մույն տեղեկանքը տրվում է առ այն, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ջ. Դադայանս վարույթումս քննված թիվ 15101816 քրեական գործով 27.07.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավվել է «ՖԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանը, որը կատարել է 32 ժամ տևողությամբ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն բանավոր թարգմանություններ:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
քննչական բաժնի քննիչ



Ջ. ԴԱԴԱՅԱՆ

31.10.2016թ.